ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի 11-րդ ենթակետի և ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/9-Լ որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 5–րդ կետի պահանջներով,

Նկատի ունենալով, որ «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախորդ՝ 2024 թվականի տարվա համեմատ հանրային պաշտպանության համար հատկացված միջոցները կրճատվել են, որի հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2024թ. դեկտեմբերի 24-ի թիվ 20/33-Լ որոշմամբ հանրային պաշտպանների հաստիքների քանակը նվազել է 11-ով՝ 2025թ. հունվարի 1-ից սահմանվելով 73,

Հաշվի առնելով հանրային պաշտպանների կրճատված հաստիքների պայմաններում դրանք տեղաբաշխելու անհրաժեշտությունը և այդ առնչությամբ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2025 թվականի հունվարի 1-ից հանրային պաշտպանի **73 (յոթանասուներեք)** հաստիքները տեղաբաշխել հետևյալ կերպ՝
   1) Երևան քաղաքում՝ **35 (երեսունհինգ)** հաստիք, որից 27 (քսանյոթ) հաստիքը՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, իսկ 8 (ութ) հաստիքը՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտացմամբ.
   2) մարզերում՝ **38 (երեսունութ)** հաստիք՝ համաձայն հավելվածի:

2. 2025 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 2024թ. հուլիսի 4-ի թիվ 285-Լ որոշումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

26 դեկտեմբեր 2024թ.
թիվ 430-Լ
ք. Երևան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
24.12.2024թ. թիվ 430-Լ որոշման

ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

№	ՀՀ մարզ	ՀՊԳ նստավայր	Հաստիքների բաշխում	Հաստիք-ների ընդ. քանակը	ՀՊ-ների քանակը	Գործունեության հիմնական վայր
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1.	**Արագածոտն**	Աշտարակ	1 1 1 0,5	3,5	4	**մարզի բոլոր բնակավայրեր**
2.	**Արարատ**	Արտաշատ	1 0,5 0,5 0,5 0,5	4,75	9	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Մասիս	0,5 0,5 0,5 0,25			
3.	**Արմավիր**	Արմավիր	1 1 0,5 0,5	6,5	10	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Էջմիածին	1 0,5 0,5 0,5 0,5 0,5			
4.	**Գեղարքունիք**	Գավառ	0,5	3,5	6	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Սևան	1 0,5 0,5			
		Մարտունի	0,5 0,5			
5.	**Կոտայք**	Հրազդան	0,5	4,5	10	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Աբովյան	0,5 0,5 0,5 0,5 0,25			
		Եղվարդ	0,5 0,25			
		Չարենցավան	0,5 0,5			
6.	**Սյունիք**	Կապան	0,5 0,5 0,5	3	7	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Գորիս	0,5 0,5			
		Սիսիան	0,25 0,25			
7.	**Վայոց Ձոր**	Եղեգնաձոր	0,5 0, 5	1	2	**մարզի բոլոր բնակավայրեր**
8.	**Տավուշ**	Իջևան	0,5 0,5 0,5 0,5	2,75	6	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Դիլիջան	0,25 0,5			
9.	**Լոռի**	Վանաձոր	1 1 1 0,5 0,5 0,25	4,25	6	**մարզի բոլոր բնակավայրեր**
10.	**Շիրակ**	Գյումրի	1 1 0,5 0,5 0,5 0,5 0,25	4,25	7	**մարզի բոլոր բնակավայրեր**
Ընդհանուր թիվը				**38**	**67**	